«Անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների (ինտենսիվիստների) միավորում» հասարակական կազմակերպության ժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

28 հունվարի 2017 թ.

ք. Երևան

2017 թ. հունվարի 28-ին Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների (ինտենսիվիստների) միավորում» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ժողովը, որին մասնակցում էին միավորման 18 անդամներից 17-ը:

Ժողովի նախագահ՝ Արմեն Վարոսյան, քարտուղար՝ Արթուր Չերքեզյան:

Օրակարգում.

1. Կազմակերպության ղեկավար մարմինների՝ նախագահի, խորհրդի անդամների, վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություններ
2. Կազմակերպության կանոնադրության նոր տարբերակի քննարկում
3. Կազմակերպության անվանափոխության քննարկում

Փակ, գաղտնի ընտրությունների արդյունքում միաձայն կերպով Կազմակերպության նախագահ ընտրվեց Արմեն Վարոսյանը, իսկ խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվեցին Կազմակերպության հետևյալ անդամները.

Խորհուրդ

1. Ամրոյան Աշոտ
2. Գաբրիելյան Լևոն
3. Ղազարյան Արա
4. Մալխասյան Իրինա
5. Մանգոյան Հարություն
6. Չերքեզյան Արթուր
7. Քյուրքչյան Խաչատուր

Վերստուգիչ հանձնաժողով

1. Գնունի Անատոլի
2. Մախմուդյան Ռիմա
3. Մինասյան Արմեն

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Ժողովի նախագահը նշեց, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում կանոնադրությունը համապատասխանեցնել նոր օրենքի պահանջներին: Ներկայացվեց Կազմակերպության կանոնադրության նոր լրամշակված խմբագրությունը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ առաջարկեց Կազմակերպության անվանումը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության կողմից հաստատված բժշկական մասնագիտությունների անվանացանկում տվյալ մասնագիտության անվանման հետ և Կազմակերպությունն անվանափոխել որպես՝ «Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միություն» հասարակական կազմակերպություն:

Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը համապատասխան քննարկումներից հետո դրվեցին քվեարկության:

Ժողովը միաձայն որոշեց.

1. Դադարեցնել Կազմակերպության նախագահ Դավիթ Մելքոնյանի լիազորությունները:
2. Կազմակերպության նախագահ ընտրել Արմեն Վարոսյանին:
3. Հաստատել Կազմակերպության ղեկավար նորընտիր մարմիններին՝ նախագահին, խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին համաձայն տեղի ունեցած ընտրությունների:
4. Կազմակերպությունը վերանվանել հետևյալ կերպ՝ **«Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միություն»** հասարակական կազմակերպություն:
5. Հաստատել Կազմակերպության կանոնադրության նոր խմբագրությունը և այն ներկայացնել պետական գրանցման:

Ժողովի նախագահ՝ Արմեն Վարոսյան

Քարտուղար՝ Արթուր Չերքեզյան